



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆՔ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1877 ԱՄԻՆ

ԿԻՍՏ ԺԵ.

25 ՆՈՅԵՄԲԵՐ 1877



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻԲԱՇԷԼԵԱՆ

1877

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ստեփան Արարանեան	Վաչագա	Ա.	ԱՏԵՆԱԳԵՏ
Նաբեան Յովհաննէս	Կֆէնաթի	Բ.	»
Տիգրան Կառաֆեան	Կֆէնաթի	Գ.	»
Համբարձում Ս. Ալաճաճեան	»	Ա.	ԱՏԵՆԱԳԵՏ
Մկրտիչ Մեփրեան	»	Բ.	»
Տէրպեկոյ Ատաթ	»	Գ.	»

ՋԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Խորեն Արքեպիսկոպոս Նար-պէյ	ԱՏԵՆԱԳԵՏ
Տ. Եղիշի վարդապետ	
Յարութիւն Մէրեճ-Գաթի	Կֆէնաթի

ԴԱՍՏԻՍՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Յովհաննէս Նաբեան	Կֆէնաթի	ԱՏԵՆԱԳԵՏ
Խաչատուր Մխարբեան	»	
Գեորգ Արտաշէս	»	

ԿԱԼՈՒԱՅՈՑ ԴԻՒԱՆ

Բարսեղ Հարսեան	Կֆէնաթի	ԱՏԵՆԱԳԵՏ
Յովհաննէս Աղաւորեան	»	
Ստեփան Փափաղեան	»	

ՅԱՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Մկրտիչ Մամիկոնեան	Կֆէնաթի	ԱՏԵՆԱԳԵՏ
Մատթէոս Ալիքոսեան	»	
Նիկողոս Ալաճաճեան	»	

ՀԱՍՏՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Սենեքերիմ Մանուկեան	Կֆէնաթի	
Ալիքոսեան Խորատանեան	»	
Ստեփան Պէյլիճեան	»	

ԻՐԱՆԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Մատթէոս Եղիսկոպոս Կաթիկեան	ԱՏԵՆԱԳԵՏ
Աւերաան Պէլիբեան	Կֆէնաթի
Քրիստոստուր Ղազարեան	»

ՆԱՍԱՋԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Գեորգ Սթրամբուսեան	Կֆէնաթի	ԱՏԵՆԱԳԵՏ
Տիգրան Կառաֆեան	»	
Օղակն Խոճասարեան	»	

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆ

Կորսուկա Խիլիճեան	Կֆէնաթի	ԱՏԵՆԱԳԵՏ
Պօղոս Պատնասեան	»	
Ստեփան Յիլիճեան	»	

ԲԱՅՈՒՄ 1877 ԱՄՐՍ

ՆԻՍՏ ԺԵ.

25 ՆՈՅԵՄԲԵՐ 1877

ՆԱԽԱԳԱՀ. — ԱՄԵՆ. Տ. ՆԵՐՍԷՍ Ս. ԳԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱԳԵՏ. — ՆՈՒՐԵԱՆ ԷՃԷՆՏԻ (Բ. Ստեփանյան)

ԱՂԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՍԵՐ

ԵՐԵՍՓՈՒՍԵՐ

ԵՆԵՂԵՏԱԿԱՆՔ

1. Խորեն Արքեպիսկոպոս Նար Պէյ
2. Կորսուկա Կաթիկեան Սեբեդեոս
3. Մատթէոս Կաթիկեան
4. Ամբրոսիոս Վ. Ռաբիանց
5. Գարեգին Թաթարեան
6. Եղիշի Ազաճաւոր
7. Խորեն Կիւրաբեանց
8. Հայկուն Գեորգեան
9. Յովհաննէս Փափաղեան
10. Ներսէս Արարեան
11. Պօղոս Խոչատեան
12. Արքեպիսկոպոս Մամիկոնեան
13. Գեորգ Արարեան
14. Գեորգ Արարեան
15. Խորեն Փիլիպոսեան
16. Յարութիւն Մեփրեան
17. Յովհաննէս Մկրտիչեան
18. Ստեփան Ստեփանեան
19. Սահակ Տ. Սարգսեան
- 20.

ԵՆԵՂԵՏԱԿԱՆՔ

(Ս. Վիճակ)

Գաւազապետ, Կիւտիկ վաչագա

Գաւազապետի դուրս

21. Գեորգ Պէլիբեան

- Բ. Բաղդատի թիւ առաջին
- Բ. 2 Բաղդատի թիւ երկրորդ
- Բ. Պ Բաղդատի թիւ րանտար պատնաս

22. Գեորգ Ստեփանեան
23. Խորեն Մանուկեան
24. Կորսուկա Ազաթեան
25. Համբարձում Մաղպուսեան
26. Մնատ Գաւառեան
27. Յովհաննէս Պօղոսեան
28. Ն. Մկրտչեան Տորթոք
29. Պօղոս Պատնասեան
30. Սարգիս Ազաթեան
31. Սահակ Աղբոս
32. Սենեքերիմ Մանուկեան
33. Փէլիպոսեան Տորթոք
34. Բարսեղ Քրիստոսեան
35. Յովհաննէս Յիլիճեան
36. Ատաթ Տէրպեկոյ
27. Գեորգ Արարեան (Ս. Վիճակ) Պէլիբեան
38. Անդրանիկ Կիւրաբեան
39. Ալիքոսեան Խորատանեան
40. Բարսեղ Հարսեան Էլիկիպոս
41. Զարեհ Քիւրաբեան
42. Մկրտիչ Քրիստոսեան
43. Պօղոս Ժամակոչեան
44. Սեպուհ Մաղապետեան
45. Թադէոս Պիլիբեան
46. Ստեփան Յիլիճեան
47. Գեորգիլ Գաթիկեան
48. Ստեփան Արարեան

- Բ. 2 Խոսկիատուր Ս. Կորսուկա
- Բ. Պ 49. Միլիան Պալիպոսեան
- 50. Պօղոս Թորթոքեան
- 51. Նիկողոս Ալաճաճեան
- 52. Տորթոք Փափաղեան (Գ. Վիճակ) Բերա և Գաւազ վաչագա
- 53. Արիկ Ունեան
- Բ. Պ 54. Գեորգ Ս. Միլիբեան
- Բ. Պ 55. Մարտիրոս Յ. Տիլիբեան
- 56. Մկրտիչ Մամիկոնեան
- 57. Նշան Քաղաղեան
- 58. Ստեփան Խոչարեան
- Բ. Պ 59. Տեղեմար Մ. Լաթիբեան
- 60. Խիսա Չալեան
- 61. Յարութիւն Նորատունեան
- 62. Գեորգ Մարտիրոսեան Միլիպոս
- 63. Կորսուկա Պ. Պիլիբեան
- Բ. Պ 64. Յակոբ Կառաֆեան
- Բ. Պ 65. Յակոբ Պ. Նորատունեան
- 66. Տիլիբեան Կառաֆեան
- 67. Պէլիբեան և Գաւազիս
- Բ. Պ 68. Յ. Մէրեճ-Գաթի (Գ. Վիճակ)
- Գաւազապետ և Խոսկիլի
- 69. Յովհաննէս Կառաֆեան
- Բ. Պ 70. Ստեփան Պիլիբեան

Գ. Ա. Ն. Ա. Յ. Ա. Ն. Ե. Բ. Ն. Ա. Վ. Ա. Ն. Բ.	Գ. Ա. Ն. Ա. Յ. Ա. Ն. Ե. Բ. Ն. Ա. Վ. Ա. Ն. Բ.	Մ. Ա. Ն.
71. Կարապետ Կապուչեան	Կարսի	121. Ստեփան Պ. Պ. Փարսադեանց
72. Մկրտիչ Մուրադեան	101.	Տիվրիկ
Նարչազայու	Քեօքանեա	122. Նշան Գարապետեան
73. Յակոբ Եջմեցեան	102. Մ. Փարսադեան Տօրթօր	Զլորտե և Մարտչ
Ենիանապոլի Սանարխոյ	Աղրիանապոլիս	123.
74. Յոզեփ Խաչատրեան	103. Ռուբեն Կիւմրի շէրտանեան	Տրասիգօն
Թօփղայիու	Նիկոպոլիս	124. Տիգրան Տ. Ներսէսեան
75. Յովհաննէս Մարգարեան	104. Կարապետ Ս. Խիթիճեան	Պարտաս
Էյուզ Ս. Եղիս և Ս. Աստուանաճիկ	Ալե	125. Մեղրոն Խաչատրեան
76. Գարեգին Յ. Մելիքեան	105. Պետրոս Միտրեան	Տիգրանակերտ
Գորու շէմէ	Հարանիտար	126. Մելքան Զարեան
77. Աստիա Ինտարպետեան	106.	Վան
Հիսար և Պոյանի գիւղ	Արարիկեր	127. Սիմոն Մարտիան
78. Յովհաննէս Նուրեան	107. Կարապետ Խաչիկեան	Ալարաւար
Նոր գիւղ և Սրէնիս	Բաղշ	128.
79. Ղազար Հովուեան	108	Հալեյ և Այնթապ
Պարսա	Պրուսա	129.
80. Մկրտիչ Գ. Էօսեան	109. Քրիստոստօր Ղազարեան	Սկրաստիս
81. Յովհաննէս Կոնիկեան	Եւրպիս	130. Մկրտիչ Յ. Մելիքեան
82. Թադէոս Թէրեանեան	110.	Ռաւանիս
Քարակիտրիկ	Անասիս	131.
83. Յարութիւն Զեմբրեան	111. Համբարձում Ալանանեան	Կարս
84. Յարութիւն Գ. Տառեան	Բալու	132. Աբրահամ Յ. Ալթաղեան
(Ե. Վ. Իճան)	112. Յովհաննէս Աղնուորեան	Զեմբրապ
Սանարխո	Եղեանիս	133. Համբարձում Մարգրէտեան
85. Ալեքսան Պելիքեան	113. Յակոբ Խիթիճեան	Գարապիս
86. Ալեքսա Քոլոլեան	Մանկըրիս	134.
87. Եղիշապետ Մելիքեան	114.	Աստեա
88. Մինաս Ճամբասեան	Հաճըն	135.
89. Յակոբ Քաղապետեան	115.	Արշերդ
90. Յակոբ Անանեան	Երզնկա և Բարսերդ	136. Մատթէոս Աւերանեան
91. Նազարէթ Կապուչեան	116.	Էօզդրաս
92. Յարութիւն Թիւլեան	Թէփիքուս	137. Լոշօֆէթ Պալեօզեան
93. Յակոբ Աբշահ	117. Տիգրան Գ. Սրեանեան	Մարտիս
94.	Կիտարիս	138. Գէորդ Վարդանեան
Խաւոզիւղ	118 Գէորդ Գ. Շիքեան	Իզմիր
95. Աստիա Ալթոն Տիւրք	119. Յովհաննէս Կազեան	139. Պապի Պապեան
96. Խաչատուր Պ. Միտրեան	120. Յովհաննէս Յովակիմեան	140
97. Ռեթէոս Պելիկեան		
98. Սիմոն Մարգրէտեան		
99. Սարգիս Աբրահամեան		
100.		

ՕՐԱԿԱՐԳ.

Յ. Հարուկչիւ կեդրոնական Սնտուկի :

Ա. Տ. Ե. Ա. Ն. Գ. Ա. Բ. Դ. Ա. Վ. Ի. Ն. Բ.

Ժամն 8 ին տաւանը բացուեցաւ ի ներպայութեան 75 երեսօտիանաց, որոց վերջին թիւն յանդեցաւ 91 ի :

Քննարկարարիւն Ժ. և Ժ. Ս. Կատրու

Ստեփանոս Կատրու

Ատենապետ Էֆէնտիս՝ նախընթաց նստերէն Ժ. և Ժ. Ս. նստերու ատենադրութեանց տարազրուած և երեսօտիանաց հաղորդուած ըլլալ ծանուցանելով, հրաւիրեց երեսօտիանները նոյն ի դիտողութիւն Ժ. նստի ատենադրութեան վրայ :

նազրութեան մէջ վեհ. Կայսեր ներկայութեւն համար պատրաստուած տաճկերէն ուղերձին սրբազրեալ օրինակը դրուած է, ինչպէս անոր տակի դիտողութիւնները կը ցուցնեն, օրինակի համար մեծիսի ունամի բառերուն տեղ մեծիսի մէջուան բառերը փոխանակ ետքն զըրուելու առաջուրէն դրուած են, և քուէարիւթ թեւէն ետև վերի օրինակին պէս ընդունուեցաւ ըսուած է : Ըսել կուզեմ թէ անոր էր նախ առաջարկեալ ծրագիրը դրուէր և յետոյ սրբազրեալ օրինակը քուէարիւթեան պահուն :

ՍՐԵԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — 223 երեսի Ա. էջին մէջ իմ խօսքս թերի մաս մ'ունի. երբ Փափաղեան Էֆէնտի յայտնեց թէ Պատրիարքարանի պարագանէ ըլլալն ինձմէ լամ ըլլայ, ես պատասխանեցի թէ այդպիսի բան մ'ըսելու չեմ յիշեր երբէք :

ՊԵՏԱՆ Թ. ԷՅ. — 223 երեսի Բ. էջին մէջ Փափաղեան Էֆէնտի նկատմամբ խօսած ժամանակս՝ երբ օրինաւոր կերպիւ բողոքողիւ

ՔԱՔԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ժ. նստի ատեն

մը ներկայացուի հոս, այն ատեն ժողովս կ'յղէ ըսի, բայց չըսի թէ իր մէջ նկատողութեան կառնու. այդ աւերող է:

Սոյն զխտողութիւններէն ետե, Ժ. նստի ատենագրութիւնը քուէի դրուելով, առաջարկուած սրբադրութեամբ հանդերձ ԸՆԴՈՒՆՈՒՆՅԱԻ Ժողովէն:

Ատենապետ Էֆէնտին հրատարակեալ երեսօն-խոսքներն Ժ.Ա. նստի ատենագրութեան վրայ զխտողութիւններն ընկելու:

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊՍ. — 240 երեսի Ա. էջին մէջ՝ խօսքս թերի մաս մ'ունի. մինչև իսկ անցեալ նստին՝ ուր ես ներկայ չէի, խօսքը ոչ իսկ ըլլայ՝ մինչև իսկ անցեալ նստին՝ ուր այս խընդիրն երեսն երաժ պահուան ես ներկայ չէի:

ՔԱՐԱՔԱՏ Ն. ԷՑ. — Ժ.Ա. նստին մէջ ներկայացուցածս Տիմրիկի վերաբերեալ խնդրոց համար 15 որ սոյնմաստամ առաջարկած ատենս, լուս կը յիշեմ որ Պատիպեան Էֆէնտի ամիս մը և Քախամանեան Էֆէնտի երկու ա-միտ սոյնմաստամ առաջարկեցին: Ասոնք չեն յիշուած ատենագրութեան մէջ:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՑ. — Իսկ վերջապէս որոշուեցաւ որքէ կարելի եղածին չափ փութով:

Դիտողութիւնը սպտուելով, Ժ.Ա. նստի ատենագրութիւնն ալ քուէի դրուեցաւ, և առաջարկեալ սրբադրութեամբ հանդերձ ԸՆԴՈՒՆՅԱԻ Ժողովէն:

2.

Քացակայութիւն

Յետագայ երեսօնխոսքներն օրինական սրտառաւ բացակայ նշանակուեցան ներկայութեան տուժարին մէջ:

Իսկ նստեան Մեղքոն էֆ. Յանգիրեան Ստեփանն անձնական տկարութեան պատճառաւ:

Պաշտօնական Լորտիէթ էֆ. ճանապարհորդութեան պատճառաւ:

3.

Տեղեկագիր Քաղ. Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Վարչութեան կողմէ քանի մը կարեւոր դրութիւններ հաղորդուած են Քիւանին, որոց մէկն է նոյն իսկ պիւսակի խընդիրը: Կը յիշե՞ք՝ որ ասիէ տաժ ժողովս պիւսակէին պաշտօնէից թոշակին վերաբերեալ մտաբանեալ արեւելեան 183 հաղորդը յիշե՞ք աւելի ծախք չընելու որոշմամբ յանձնարարութիւն ըրաւ Վարչութեան, որ ըստ այնմ ամասկանոց բաշխուած կատարէ պաշտօնէութեանց վրայ: Վարչութիւնն ալ իրեն յանձնուած սոյն պաշտօնը կատարելով, արդիւնքը կը տեղեկագրէ և կը ցուցնէ թէ ինչ կերպով վարուած է. միանգամայն տարեկան 13 հաղորդ զարկ մը կը խնդրէ: Եթէ ժողովը կուզէ, կարողանք այս տեղեկագիրը և պէտք եղած որոշումն ընելէ ետե անցնինք ուրիշ կարեւոր խնդիրներու:

ՉԱՅՆԵՐ. — Կարծենք տակէ աւելի ստիպողական խնդիրներ սենինք ոչսօր. կուսաբար կենք որ այդ տեղեկագիրն ատենագրութեան մէջ անցնի յառաջիկային նկատողութեան առնուելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կընդունի՞ք որ այս տեղեկագիրն Օրակարգն անցնի:

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵՊՍ. — Պիւսակի խնդիրն արդէն Օրակարգին մէջ է, և առաջնութիւն ստացած. կը մնայ Վարչութեան տեղեկագիրն ատենագրութեան մէջ անցունել սերտելու և յառաջիկային նկատողութեան առնելու համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Վարչութենէ ե-կած տեղեկագիրը նախ ըստ կանոնի Համարա-

կալութեան դիւանին պէտք է յղուի, և անոր տեղեկագրովը հոս դայ վիճարանութեան դրուելու համար:

ՄԱՐԱՊԵՏԵԱՆ Ս. ԷՑ. — Էտա՞յնքով որ նախ կարգացուի տեղեկագիրը, հասկնալու համար թէ նախաքննութեան յղելու պէտք կայ:

Ուրիշ զխտողութիւն ընող չըլլալով, ան միջապէս կարգացուեցաւ Վարչութեան տեղեկագիրն, որ է:

Վսեմ, Ատենապետ էֆ. Ազգ. Ժողովոյ

Ազգային Վարչութեան Քաղ. Ժողովոյ Մայր դիւանից կողմէ անցեալ սեպտ. 26 թուականաւ ուղղեալ պաշտօնագիրն ստանալով տեղեկացաւ որ Ազգ. Ժողովին իւր Ժ. նիստին մէջ կեդր. սնտուկի պիւսակէն նկատողութեան առնելով և անոր ծախուց կողմի պաշտօնէից թոշակին վերաբերեալ մասին վիճարանութիւնն աւարտելով, յետ քուէարկութեան որոշած է պաշտօնէից թոշակին համար տարեկան 183 հաղար զը սահմանել անցուկ դրամ, և Վարչութեան յանձնած է որ ըստ սահմանադրութեան դիւանատան բաժանմունքին և ամսականաց բաշխման գործողութիւնը կատարէ պաշտօնէութեանց վրայ և տեղեկագրէ Ազգ. Ժողովին:

Սոյն որոշման համաձայն Քաղ. Ժողովս Պատրիարքարանի պաշտօնէից համար սահմանեալ տարեկան 183 հաղար զը անցուկ դրամի բաշխումը կատարեց, ներկայ պաշտօնեաներէն ոչ զը արձակելով, 500 զը մար ամսական ունեցողներէն ոչ ինչ չըղղելով և միայն 500 զը էն վեր ամսական առնողներէն աստիճանաբար զեղելով, և միանգամայն դիւանատան բաժանմունքը կարելի եղածին չափ

ըստ Սահմանադրութեան կարգադրեց, ինչպէս կը տեսնուի ներկակեալ ցանկէն:

Գիտել արժան է որ Քաղ. Ժողովոյս ներկայացուցած ամսաթուղակաց բաշխման ցանկին մէջ ամսականաց դուանին 16380 զը կը յանդի, որոյ տարեկանը կընէ 196560 զը անցուկ դրամ, այսինքն Ազգ. Ժողովոյ սահմանած դուանին 13560 զը աւելի:

Սոյն փոքրիկ աւելագրութիւնն ընել անհրաժեշտապէս հարկ եղաւ Պատրիարքարանի գործոց ներդաշնակութիւնը պահպանելու համար, և Քաղ. Ժողովս աներկբայ է որ պատկասուելի ժողովու ալ ընդունելութեան արժանի պիտի համարի:

Այս առթիւ Քաղ. Ժողովս հարկ կը գատի նաև յայտ առնել թէ Պատրիարքարանի պաշտօնեայք խմբովին Վարչութեան դիմելով և յայտնելով որ մինչդեռ ժամանակն արդէն ապրուստի նիւթերուն գինն եռապատկելով շատնոց իրենց ամսականները զեղչած և զիրենք տառապանաց մասնած էր, այս վերջին զեղչն որ կրկնակի եղանակաւ մը կատարուած կը համարին, այսինքն զեղչ մը ամսականաց դուաններուն քանակութեան վրայ և ուրիշ զեղչ մ'ալ վճարուած դրամին գնոյն փոփոխութեամբ կատարուելով, իրենց վիճակը բոլորովին վատթարացնելու պատճառ պիտի լինի, կը խնդրեն որ գոնէ բաւ համարուի ինչ շահ որ կը գոյանայ թոշակաց քանակութեան վրայ եղած զեղչէն, և գէթ զեղչուած ամսականները վճարուին հարիւր զը թղթադրամով, ինչպէս որ կեդր. սնտուկին հասոյթները կը գանձուին և ինչպէս որ կը վճարուէին ասիէ յառաջ նաև իրենց թոշակները: — Քաղ. Ժողովս

Թէ և պաշտօնէից սոյն խնդիրն իրաւացի
կը համարի և այս կերպիւ անսնց անտանե-
լի նեղ վիճակին փոքր ի շատէ գարման մը
ընծայել ժամանակիս պարագաներուն նը-
կտամանք կարևոր կը դատի. սակայն ու-
րովհետև պատկառելի ժողովոյդ նախկին
որոշման առջև իւր ձեռնհասութենէն վեր
էր այս մասին տնօրինութիւն մ'ընել, ուս-
տի հարկ համարեց պատկառելի ժողովոյդ
որոշումն ու հաճութիւնը խնդրել այս
մասին և սպասել ժողովոյդ հրահանգին՝
ըստ այնմ պէտք եղած դործադրութիւնն
ընելու համար :

Մնամք յարգանք ,

Ի դիմաց Քաղ. Ժողովոյ Ազգ. Վարչութ.

Ատենադպիր

Ատենապետ

Մ. Արքայան

Ս. Մ. Քոչարեան

25 նոյեմ. 1877

Գ Ի Ի Ա Ն Ա Տ Ո Ի Ն

ԲԱՏԱՆՆԱԼ ԲՈՏ ԱՆՎՄԱՆԱՌՈՒԹԵԱՆ

ՅԵՐԻՍ ԳՐԱՍԵՆՆԱԿՍ

Ձ. - Թղթակցութեան Գրասենեակ

1. Գիւնպետ խմբագիր Հայերէնի	4500
2. Ա. Ընդօրինակող »	
որ և գիւնդպիր Յնձնժողոց	550
3. Բ. Ընդօրինակող Հայերէնի	300
4. Խմբագիր Տաճկերէնի	1000
5. Ա. Ընդօրինակող »	700
6. Բ. » »	300
	<hr/> 4350

Ձ. - Արձանագրութեան Գրասենեակ

Ազգ. Ժողովոյ, Վարչութեան

Խառն ժողովոյ և Քաղ. Ժողովոյ համար
Գիւնպետն և իւր 2 ընդօրինակողները

7. Գիւնադպիր կրօն, ժողովոյ	400
8. Օգնիչ Գիւնդպիր » »	200
9. Գիւնդպիր Գատասա, խորհրդոյ	650
10 » Տնտես. » և	
օգնական Գիւնադպետի	4000
11 Օգնիչ Գիւնդպիր Տնտ. խորհրդ. յ	300
12 Գիւնդպիր Ուսումն. և Վանօրէից	
խորհրդոյ	550
13 Գիւնդպիր Ելեմոլոց և կտակաց	
հոգարարութեան	550
	<hr/> 3650

Տ. - Ազգահամարի Գրասենեակ

14 Գիւնդպիր անցագրատան	800
15 Օգնիչ Գիւնդպիր »	300
16 Համարակալ	750
17 Սնտուկի դանձապահ. որ և	
սենեկապետ Գիւնադպետ	400
	<hr/> 2250

Մնացեալ պաշտօնեայք Պատրիարքարանի

18 Փոխտնօրդ. Հայր	4000
19 Բ. Գրան դործակատար	1600
20 Ոստիկնութեն »	550
21 Օգնիչ » (գարու	
չուքատարի)	350
22 Բարապանք 6	1900
23 Մատակարար	250
24 Սենեկապանք 2	400
25 Գունապան	80
	<hr/> 6130

Համագումար 16380

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք,
մեր բացատրածին համեմատ՝ Վարչութիւնն ոչ
միայն 13 հազար դրէ վարձի մը կը խնդրէ, այլ
և տնտեսականները հարկը զրուշ թղթագրամով
վճարել կտա՞նք. ուստի այս տեղեկագիրը
հարկ է յղել Համարակալութեան գիւնդին, որ-
պէս զի իւր կարծիքը բերէ և ըստ այնմ վիճա-
րանութեան դրուի Ժողովոյս մէջ :

Անիճապէս բուլի դրուելով, միաձայնու-
թեամբ ԸՆԳՈՒՆՈՒՄԻՆՅԱԻ յիշեալ տեղեկագիրը
Համարակալութեան գիւնդին յղել :

Ք

Ինչպիսի Զինուորացորդեան

Վարչութեան Քաղ. Ժողովն եկած յե-
տագոյ գիրն ալ կարդացուեցաւ :

Վսեմ. Ատենապետ էֆ. Ազգ. Ժողովոյ

Օամ. տէրութեան ոչ—մահմետական

հօրատակաց քաղաքային գիւնուորացորու-
թեան համար Բ. Գունէն ամսոյս 15 թը-
ւակնաւ առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն
ուղղեալ ծանուցագիր մը գալով՝ Ն. Բարձր
Սրբազնութիւնը Քաղ. Ժողովոյս ներկա-
յացուց զայն և հեռեւապէս ժողովս նայն
ծանուցագիրը կարդալէ ետև՝ սրտից ա-
ռանց դիտողութեան Ազգ. Ժողովոյ գի-
տութեան հաղորդել զայն :

Ըստ այնմ յիշեալ ծանուցագիրը մա-
տուցանելով Քաղ. Ժողովս կուպակ Պատ-
կառելի ժողովոյդ հրահանգին, վասն զի
ինչպէս մայրաքաղաքիս թաղական խոր-
հրդոց կողմէ եկած գրութիւններէն կը
տեղեկանայ, կառավարութիւնն արդէն
գործադրութեան ձեռնարկելով սախո-
ղարար Յանձնաժողովոց անդամներ և թա-
ղահամարի ցուցակներ սկսեր է պահան-

ջել. և հեռեւապէս թաղական խորհուրդ-
ները հրահանգ կը խնդրեն այս մասին,
ըստ այնմ շարժելու համար :

25 նոյեմ. 77 Մնամք յարգանք
Ի դիմաց Քաղ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Մ. Արքայան Ս. Մ. Քոչարեան
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

Նայեալէս կարդացուեցաւ Բ. Գունէն եկած
յետագոյ հրամանագիրը հանդերձ Հայրն
թարգմանութեամբն :

ԵՐՄԷՆԻ ՊԱԹԻՒՐԻԿԻՆԷ

Բութալթիւ Էֆէնտիմ հաղթելէրի
Ղաղթիւթալթիւ նէշր օլունան Իլանը
Բէսմիտէն մալիւմի Ստիլանէլթիլի օլտուզու
իւղրէ՝ Ձաթը Հաղթելի փատիլաճինին ու-
մում թէպտայի Շահանէլթիլի հաղարըն-
տա տէրընար օլան նաղարը առալթ է.
սիլի Հիւմայիլնէլթիլի վէ հէր սընուֆ թէ-
պտայի Միլիւքեանէլթիլինի մահափաղայի
վէթան շէրէֆ վէ միւլազաթընտան հըս-
սէմէնտ պուլուրմագ նիլթիլի ալիլիէ-
սէնսանէսի իլթիլայի ճէլիլինտէն օլմագ-
իւղրէ, պու քէրրէ թէպտայի զայրէ միւս-
լիւմէյի Օսմանիլթեան նիլամը մախսու-
սընտա մուայիէն էսնան էրաղաղընտան
օլանիլթիլինին Սաքիլի Միլթիլթի թապուր-
լթիլինէ գայտ ու գապուլթիլի պա իլա-
տէյի սէնիլթիլ թէպարուր իլլէմիշ սիլ :

Սընուֆը թէպտայի Շահանէլթիլին ահ-
վալը ֆէվզ էլ առէյի հաղըրէլին թա սի-
տայիլթիլնտէն պէրու մէշուտ օլան մէսա-
յիլ վէթանիլթիլթեանէսի մագսէտի խայ-
րի մէրսէտի ճէնապը Միլիւքեանէլթիլին
իլպու էսիլի ճէտիտ ու ճէլիլինի քէմալի

իլէ թագաւոր վէ թէլոզգընա տէլիլի
 քնափի օլտուզու միտլլու, բուէսայի
 բուհանէլլէ վէ պա խուսուս զաթը Աօիլա-
 նէլէրինն տէֆը զէվայիլ էմը մուհիմին-
 տէ Տէվէթնէ իթթիխազինէ իւզուժ կէօ-
 բիւնէն թէտապիրանէն աօլայը մուալէնէ-
 թի մուզթալիլէ ի մա զիտաէ իճրայէ
 հիմնէթ վէ միսարէաթլէրի տախի
 սատազաթ վէ զայրէթ միւսէլլէմէլէ-
 բի սասըր իլէ սապիթ օլմուսը իլէ պու
 պապաէ հասըրը թահաիլ գապլլինտէն օ-
 լարագ իճրայի վէսախանէ լիւզում կէօ-
 բիւնէտիլի պէնանի իլէ թէղքէրէի սէ-
 նալէրի թէրզլիմինէ իպթիտար գըլլնաը
 էֆէնաթ : (Իէա)
 1296 Զիլգաաէ 21 Սէրվէր
 1293 Թշրնի սանի 13

Հայերն Յարգանքիւնը

Ինչպէս Ձեր Սրբազնութիւնը վերա-
 հասու եղած է լրագրաց միջոցաւ հրա-
 տարակուած Պաշտօնական Յայտարարու-
 թենէն, կայսերական բարձր հրամանաւ
 որոչուած է որ յասկապէս հաստատուած
 կանոնին սրամազրած տարիքներուն մէջ
 գանուող ոչ մահմետական օսմանեան հը-
 պատակներն ևս արձանագրուին և ըն-
 գունուին քաղաքային զինուորաց զուն-
 գերուն մէջ, որ ն կայսերական Վեհա-
 փառութեան իւր ընդհանուր հպատա-
 կաց վրայ ունեցած արգարակորով հա-
 մակրութենէն և առհասարակ բոլոր կայ-
 սերական հպատակներն հայրենեաց օլաշա-
 պանութեան փառքին մասնակից ընելու
 ամենագոյնի գիտաւորութենէն յառաջ
 եկած է :

Սրբ. Ժամանակիս արտաքոյ կարգի

պարագայներուն ծաղումն առած օրէն
 ի վեր կայսերական հպատակաց ցոյց
 տուած հայրենատիրական ջանքը բաւական
 ապացոյց է, թէ սոյն նոր և վսեմ անօ-
 բէնութիւնը, որ Օգոստափառ կայսեր
 օգտաւէտ գիտաւորութեանց արդիւնքն
 է, կատարելապէս պիտի գնահատուի և
 ընդունուի, և ըստ որում ներկայ դրադ-
 մանց բարձմանը մասին ահարութեան կա-
 բերք գատած անօրէնութեանց նկատ-
 մամբ հոգեւորական գլխոց՝ նա մանաւանդ
 Ձեր Սրբազնութեան վկայեալ հաւատար-
 մութեան և եռանդին արդիւնքն եղող
 հարկ եղած աջակցութեան վորձն անդր
 քան զառաւելն տեսնուած և ապացուց-
 ուած է, հետեաբար ներկայիս և կը ծա-
 նուցանեմ որ այս մասին յանձնարարու-
 թիւն ընելն աւելորդ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կրեւոյի տան էֆէնաթի-
 ները տեղեկութիւն տաին Զինուորագրութեան
 մասին Բ. Պրան հարգուած պաշտօնագրոյն
 վրայ, և որովհետեւ Վարչութիւնն է որ այս
 խնդիրը հաս կը բերէ, ուստի նախ կը հարցնենք
 Ս. Պատրիարք Հօր, իբր նախագահի Վարչու-
 թեան ինչ է իւր կարծիքն այս մասին և թէ
 ինչ զիտաւորութեամբ խնդիրը հաս բերած է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Եւ որովհետեւ
 Սրբազնը Ժողովիս ալ նախագահն է, ուստի
 պէտք է որ Վարչութեան կողմէ խօսի և անոր
 կարծիքը բացատրէ այս պարագայիս մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Նախ կը հարցնեմ Ժո-
 ղովին թէ կուզե՞ զանփակի մէջ լսել Սրբազան
 Հօր բացատրութիւնը :

Այլ և այլ ետադաններ, ձայներ. — Պրան-
 փակի հարկ չէր :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱՍՏԱՆ. — Ինչպէս որ Բ.
 Պրան ծանուցագրէն կը տեսնուի, մեզի հա-

զորդուածը կայսերական բարձրագոյն հրաման
 մ'է, և մինչև ցարդ տէրութիւնը իւր բրիտանեաց
 հպատակներն զօրք չէր ընդունէր, այսուհետեւ
 պիտի ընդունիմ կրտէ, և պատճառն ալ ցուցը-
 նելով կը յայտնէ թէ հաւասարութիւնը կատա-
 վելապէս զործադրելու համար է. կը տեսնէք որ
 պարզապէս հրաման մ'է այս, և մեզի խորհուրդ
 կամ կարծիք ալ չհարցնէք, այլ կուզէ որ մեր
 ժողովուրդը յորդորենք այս մասին :

Ես շատ առիթներու մէջ ըսած եմ տէրու-
 թեան նախարարաց, ինչպէս նաեւ այս վերջին
 օրերս տիրութեան պատճառաւ հրաժարականս
 Բ. Պրան մատուցանելուս առթիւ յայտնեցի
 թէ մեր ազգը պատերազմի երթալէ կը խրաչի,
 վասն զի այսքան տարիէ ի վեր զէնք առած և
 պատերազմի վարժուած չէ. բայց թէ որ իւր
 տունն աւ ընտանիքը և վերջապէս իւր հայրենի-
 քը պաշտպանելու համար իրեն զէնք տրուի,
 չեմ կարծեր որ այս մասին ընդդիմութիւն ընէ,
 բանդի քիւրտերուն բռնութեանցը համար մեզի
 ալ զէնք տրուիլ խնդրած ենք արդէն : Սակայն
 աւելցուցած եմ թէ, եթէ այս պարագայիս մէջ
 ազգը հաւաքապէս և հանդիսապէս պատերազմի
 հրաժրուի, չկրնար ընդունիլ. ինձ պատասխան
 տրուեցաւ թէ՛ մէջ, պատերազմի համար չէ այս
 զինուորագրութիւնը, և եթէ լսածս ստոյգ է,
 Յունաց Պատրիարքն ալ չըջտերտեալաւ մը
 կիմացնէ եղեր իւր ազգին թէ պատերազմի շղի-
 տի երթան, և արդէն Բ. Պրան այս պարագայ-
 ին համար շնորհակալութեան գիր դրկած է :
 Եթէ ամեն Պատրիարքներն ընդունին և մեր
 չենք ընդունիր ըսենք, ասի ուշադրութեան ար-
 Ժանի կէտ մ'է : Կարգչեմ այսքանով բաւա-
 կանացէք, բանդի տկար ըլլալուս՝ ասկէց աւելի
 չեմ կրնար խօսիլ :

[Պիճոն մրտաւորներ Ժողովրդեան մէջն զին-
 տրագրութեան դէմ.]

ԲԱՆԻ ՄԸ ՂԱՅՆԵՐ. — Այսպէս ժողովը-
 դական ազնակի մէջ չկրնար խօսուիլ. զորն
 փակ պէտք է :

ՇԱՂՊՈՋ Կ. ԷՅ. — Պահ մ'առաջ երբ

պաշտօնակիցներէս ոմանք զանփակի պէտք կը
 յայտնէին, ես պատասխանեցի թէ զանփակի
 պէտք չկայ, զի խնդիրը ժողովրդային է, և իբր
 այն՝ ժողովուրդը պէտք է լսէ և խմանայ ինչ որ
 երեսփոխանութիւնը կը խօսի : Սակայն ժողո-
 վըրդեան պարտքն է լրաթեամբ հանդիսատես
 ըլլալ. երբ այսպէս ի նպատակ կամ ընդդէմ
 ցոյցեր ընեն և արգելք լինին երեսփոխանաց
 խօսքերուն, այն տեսն ես առաջինք պիտի ըլ-
 լամ զանփակ առաջարկելու :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՅ. — Ես ալ գիտ-
 նալով որ ժողովուրդը շղիտի հանդարտ թողու-
 ղմեղ, զանփակ ուղղութիւնն էի, և հիմա նո-
 բէն կառաջարկեմ որ նիսաը զանփակ լինի :

Տ. ՄԱՏԹ. ԵՊՍ. — Ժողովուրդը վստահ է
 թէ երեսփոխանութիւնն ազգին իրաւունքը սի-
 տի պաշտպանէ. այս նկատմամբ իբր եկեղեցու-
 կան կը խնդրեմ հանդիսական ժողովուրդէն՝ որ
 լրաթեամբ մտիկ ընեն և սպասեն վերջին վըճ-
 ոյն՝ զոր բուէն պիտի որոշէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Անշուշտ կանոնական
 կերպիւ արգիլեալ է ժողովուրդին՝ ոչ նպատա-
 ւոր և ոչ աննպատակ ցոյցեր ընելու. ասոր հա-
 մար Պրանը կը յայտարարէ որ եթէ առաջին
 առթիւ ազնակ մը բողի ժողովուրդին մէջն,
 անմիջապէս նիսաը զանփակի պիտի փոխուի :

Այս ազգարարութիւնն ընելէ ետեւ Ատե-
 նապետ էֆէնաթն առաջին խօսք ուղղ երեսփո-
 խանին հրաէք կարդաց, որ էր Պէկեան է-
 ֆէնաթն :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՅ. — Այսօր Ընդհանուր
 Ժողովին ներկայացեալ բողաքային զինուորա-
 գրութեան խնդիրը նոր է և զարմանալու չէ
 եթէ յաղմուք յառաջ բերէ հաս : Որ և է խըն-
 դիր մը երբ Ընդհանուր Ժողովին ներկայանայ,
 մեր պարտականութիւնն է հետազօտել և տե-
 դեկանայ նախ՝ թէ Ընդհանուր Ժողովին՝ կը
 պատկանի : Սոյն սկզբուն համեմատ ևս ալ
 նկատարութեան կառնում գիտնալու համար թէ

այս խնդիրն՝ որ հոս մուտ կը գտնէ այսօր, մի-
թէ կը սրտականի՞ Ընդհանուր Ժողովին :

Արդ, կը բանամ Ազգային Սահմանադրու-
թիւնը և նախ Ընդհանուր Ժողովոյ պաշտօնը
գիտնալու համար կը տեսնեմ՝ որ 60րդ յօդուա-
ծը կը տրամադրէ և կըսէ թէ՛ « Ընդհանուր Ժո-
ղովին պաշտօնն է՝ Պատրիարքը, Կաթողի-
կոսը և Ազգին գլխաւոր պաշտօնատարները
« և Արծնական ու Քաղաքական Ժողովոյ ան-
« դամները ընտրել. Ազգային ժողովոյ վար-
« չութեանը հսկողութիւն ընել, սոյն Ժողովնե-
« բուն վերաբերեալ՝ բոց իրենց ձեռնհասութե-
« նէն վեր համարուած գործերը որոշել և վճ-
« ուել. և Ազգային Սահմանադրութիւնը ան-
« խախտ պահել » : Կը տեսնեմ որ այս խնդիրն
Ընդհանուր Ժողովոյ ունեցած ընտրութեան
պաշտօնին մէջ չկայ. նմանապէս հսկողութեան
պաշտօնին մէջ ալ չկայ : Կը դառնամ Արծնա-
կան ու Քաղաքական Ժողովոյ պաշտօններուն
մէջ փնտաւել, և կը տեսնեմ որ հոս ալ չկայ.
Վասն զի Սահմանադրութեան 28րդ յօդուածը
Արծնական ժողովոյ համար կըսէ թէ՛ « Արծնա-
« կան ժողովոյ պաշտօնն է Ազգային կրօնական
« գործոց ընդհանուր տեսչութիւնը. իր սրբ-
« առուորութիւնն են՝ Ազգին մէջ կրօնական
« դրացումը զարգացնել, Հայաստանեայց եկե-
« սեցոյ դաւանութիւնն ու տանգութիւններն
« անխախտ պահել, եկեղեցեաց և եկեղեցա-
« կանաց բարեկարգութեանը հսկել, եկեղեցա-
« կանաց ներկայ վիճակը բարելաւելու և սուր-
« գոյն անդորրելու և տարահոլութիւններ միջոց-
« ները ձեռք բերելու հոգ տանիլ, Ազգային
« վարժարանաց երբեմն երբեմն սցյելութիւն ը-
« նելով : Քրիստոնէական վարդապետութեան
« աւանդման վրայ հսկողութիւն ընել, արժա-
« նաւոր և բանիրան վարդապետներ և քահա-
« նաներ հասցունել, և Ազգին մէջ ծագած
« կրօնական վիճերը քննելով՝ եկեղեցոյ օրի-
« նաց համեմատ լուծել » :

Եւ 41րդ յօդուածը Քաղ. Ժողովոյ համար
կըսէ թէ՛ « Քաղաքական Ժողովոյ պաշտօնն է
« Ազգային քաղաքական գործոց ընդհանուր
« տեսչութիւնը. իր սրբաւարտութիւնն են

« Ազգին բարեկարգութեան և յառաջադիմու-
« թեան մտադրութիւն և փոյթ տննելու, իր
« տեսչութեան տակ դրանուղ Խորհրդոց կողմէն
« մատուցուած ազգօգուտ առաջարկութիւնները
« ուշադրութեամբ քննել, և անոնց կարեւորու-
« թիւնը յայտնուելն ետքը՝ հաստատել կամ
« գործադրութեան արգելիները բաժնադր ջանք
« ընել » :

Կը տեսնէք՝ որ ոչ Արեւիտիտանութեան և
ոչ Արաբական ժողովոյ պաշտօններուն մէջ չը
կայ այս խնդիրը և բոլորովին նոր է մեզ հա-
մար. սակայն սէտք է փնտաւել և գտնել թէ
որո՞ւ կը սրտականի և ի՞նչպէս մուտ գտեր է
հոս : Կը բանամ Սահմանադրութեան մէջ սրտա-
րիարքական պաշտօնի վերաբերող 1⁰ յօդուածն
և կը տեսնեմ որ Սրբազան Պատրիարքին պաշ-
տօնը կը գծէ ընելով թէ՛ « Արեւիտանապետ-
« սոյ Պատրիարքը բոլոր ազգային ժողովոյ
« Կախադասն է, և անոնց գործադիր իշ-
« խանութիւնը կը վարէ, և մասնաւոր սրբա-
« գաներու մէջ Տէրութեան հրամանաց գոր-
« ծադրութեան միջնորդն է » Ուրեմն, ինչպէս
կը տեսնէք, Սրբազան Պատրիարքը Հօր պաշ-
տօնին մէջ միայն կը գտնենք այս խնդիրը. լու-
ուշադրութիւն ըրէք այս կէտին. « մասնաւոր
սրբադասներու մէջ տէրութեան հրամանաց
գործադրութեան միջնորդն է » կըսէ Սահմանա-
դրութիւնը Սրբազան Պատրիարքին համար.
ուրեմն ոչ մեր և ոչ վարչական ժողովոյ
պաշտօններուն չարտահանիր այս խնդիրն,
այլ ուղղակի Պատրիարքութեան պաշտօնին կը
սրտականի :

Սրբազան Պատրիարքը թող չը տքնի թօթ-
ուել իր վրայէն ներկայ բարձրագոյն հրամա-
նին գործադրութիւնը՝ բերելով խնդիրն Ընդհա-
նուր Ժողովոյ ատենաճ : Ժողովոյ գործ չուէի
սոյն խնդրոյն մէջ, ժողովուրդն իւր երեսփոխա-
նաց պաշտան տուած չէ սոյն խնդրոյն վրայ խօ-
սելու, որովհետեւ նախատեսուել չէ. ժողովըր-
դեան և տէրութեան մէջ կարգադրութիւն իւրն
զիր մ'է այս : Պատրիարքը միայն միջնորդու-
թեան պաշտօն մ'ունի ըստ Սահմանադրութեան
Եւ սակայն գործադրութեան համար կրնայ Քա

գործական և կրօնական ժողովոց խորհրդին
զիմել և թէ հարկ տեսնելու ըլլայ. մանաւանդ
կրօնական ժողովին, և ի առիակէ հարկին՝ նաև
Արծնական Համագումար ժողովին, որովհետեւ
ըստ խնդրոյն մէջ կրօնական մաս ժը կայ,
որ խիտ կնճատ է : Ամենքը ալ գիտէք
թէ Քրիստոնէի մը անբաժնելի սրբաւարտու-
նութիւնն է վերջին սուրբ Թաշակն ընդունիլ.
ո՞վ պիտի մասակարարէ սոյն խորհուրդն ար-
իւն թափելու վրայ եղող Քրիստոնէաց հայուն,
և ինչպէս. ո՞վ պիտի երաշխաւորէ այս սուրբ
խորհրդին մատակարարուելուն : Այլ սակայն
յառաջ քան զայստիկ ո՞ր կրօնական հեղինա-
կութիւնը պիտի թողարկէ Հոյ քրիստոնէին՝
որ դարերէ ի վեր թաւը պատեանն է գրած,
սուր քաշել և սուրով անկանիլ : Այսք է նախ
սոյն հեղինակութիւնը գտնալ և անոր զիմել,
ինչպէս որ տէրութիւնն անգամ նախ Եէյիսիւ-
Խալապէն Ֆէրվա կառնու և այնուհետեւ պատե-
րաղմ կը հրատարակէ :

Բոլոր այս կէտերը Արծնական ժողովոյ հե-
ղինակութեանը վերաբերեալ ըլլալով, յուսովի
է որ Սրբազան Պատրիարքը Արծնական ժող-
ով իւր պատրիարքական միջնորդութեան
պաշտօնը կը կատարէ, որպէս զի ապագային
մէջ նորանոր դժուարութիւններ չը յառնեն տե-
րութեան առջև :

Կեզրակացնեմ թէ Ընդհանուր ժողովոյ
վերաբերեալ գործ մը չկայ այս խնդրոյն մէջ.
Սրբազան Պատրիարքն է միայն միջնորդ Ազգին
և Տէրութեան մէջ կարգադրութիւնը գործոց.
Սահմանադրութիւնը լու գծած է Պատրիարքին
սոյն պաշտօնը : Ուրեմն անոր վերադարձնելու
է : սոյն է իմ կարծիքս :

[Ծախանապարտիւն Ժողովոյն կողմէ]

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — (Ժողովրդական ուղղիւմ)
Փափահարութիւն ընելով կատարէք Պիւսանը
գործեալ ազգաբարեւ ձեզ թէ՛ ըրած շար-
ժուակիդ ապօրինաւոր է և տեղի չկայ ոչ ծա-
փահարութեան և ոչ որեւէ ցոյցերու, սէտք է
որ ըստ կենսք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅՑ. — Տեսիր Երեսփո-
խանք, իրաւունք ունէր Ալեկան Էֆէնտի
ձեռնհասութեան խնդիրը յարուցանելու. իրա-
ւունք ունի՞մ ես ալ ուրիշ խնդիր մը հանելու,
և բռնելու թէ Գլխաւորադրութեան խնդիրն
կանոնադրապէս եկած չէ հոս : Ժողովին
կանոնադրութեան 88րդ յօդուածը կըսէ թէ՛
« Կեզր. Վարչութեան արտաքին յարաբերու-
« թիւններէն ծագած խնդիրներն անուղղակի
« կուզան կեննեն Ժողովին ատենաճը Պատրի-
« արք Սրբազանին միջնորդութեամբ : Այս
« ճամբով եկած թողութիւնը կամ Հրամանա-
« գիր է Բ. Գոնէն, կամ կոնդակ Վեհ.
« Կաթողիկոսին, կամ խնդրադիր Գաւառ.
« ժողովներէն և Առաջնորդներէն, և կամ
« աղերսաւոր հասարակութեան կողմէն, Պատ-
« րիարք Սրբազանին ուղղեալ, որ ատենց
« մէջէն Ժողովին ներկայեցիկները կը հարդրէ,
« անոր կցելով միանգամայն Վարչութեան
« կարծիքը նոյն խնդիրն վրայ և պարտ ու
« պատշաճն իմացնելով » :

Արդ՝ այս յօդուածին համեմատ Բ. Գրան
մէկ հրամանադիրն է որ կը ներկայանայ հոս
Վարչութեան ձեռք. սակայն ո՞ր է Վար-
չութեան կարծիքը՝ որ սարսաւոր էր կցել և այն-
պէս բերել հրահանադիրն, սովի փնտաւածս այս
կէտին մէջ, Վարչութեան կարծիքն է. եթէ
Վարչութիւնը զեղեկելու բան մ'ունի այս
խնդրոյն մէջ և կամ եթէ բոլորովին իւր
ձեռնհասութեանն վեր կը դատի խնդիրը, սէտք
է ըսել և խնայել մեզ : Սրբազան Պատրի-
արքն ըսաւ թէ Գոնայ Պատրիարքը չնորհա-
կալութիւն յայտնեք է Բ. Գրան. ո՞վ կըսէ
թէ մեր չպիտի հաղանդիքը կայսերական
իրատիւն. սակեց 7 տարի առաջ այս Ժո-
ղովը գաւառական հարստահարութեանց խնդրոյն
քննութեան առթիւ խորհեցաւ բոց չհամար-
ձակեցաւ սոյն չնորհը խնդրել տէրութեանն
Այժմ տէրութիւնն ինքնայորոք զմեզ ի զէն
կը հրատարկէ և այնպիսի առնն մը՝ որ ամենու
ալ մատանջութեան տեղի կրնայ տալ. ուս-
տի տար գործադրութեան հանգամանքն այն-
պիսի սրայմաններու և ձեւերու կարօտ է, որ

կարենան մտքերը հանդարտեցնել : Երբ այս-
պիսի խնդրոյ մը վրայ անպատրաստ կը հրա-
ւիրուիմ հոս, անոր նախնական քննութեանը
չմտած՝ բան մը կարող չեմ ըսել . ես քա-
ղարային գիտութեան կանոնադիրը ծայրէ-
լի ծայր կարգացի և դատոյ այնպիսի կէտեր՝
որ անմիջական ուշադրութիւն կը դրուեն . վեր-
ջին յօդուածը կըսէ թէ՛ երբ քաղաքը վտանգի
տակ լինի՝ սակնն ալ պիտի գիտուորին : Այդ կա-
նոնադիրը քննութեան կարօտ է . և առանց այս
քննութեան ի՞նչ քուէ կրնանք տալ :

Ասիկա այնպիսի բան մ'է որ չնէք չն-
դունքի չըլար . միայն թէ այս միջոցիս
սրտաբան չենք դառնիր կոր . եթէ 56 ի
Խաթիւնը Հիւանդանոցն անմիջապէս ետքն ըլլար
այս բանը, մինչև հիմա շատ օգուտ պիտի
ունենայինք, այս պահուն պահուեր է եղեր :
Ինչ որ է, խնդիրը ժողովուրդին է . բայց
մեր խնդիրը սերտած ու լուսարանած հաս-
կընալու էինք . սասնկ անպատրաստ դալ և
կարծիք յայտնել աղէկ չէ մեզի համար :
Կանոնադրութեան 88րդ յօդուածին վերջին
դարբերութիւնը կըսէ թէ՛ « Ժողովն ըստ
« սրտաբանին կամ վարչութեան կը յղէ ի տնօրէ-
« նութիւն, կամ իր դիւանաց նախարանու-
« թեանն կանցուանէ խնդիրը, կամ մասնաժո-
« ղովէ մը և կամ Առնապատաց դիւանին
« և ասանց տեղեկագրին վրայ կը վիճէ կորուչ-
« իր սրտաբանը և կը հաղորդէ իր նախագա-
« հին առ ի տալ որում անկ է » :

Արդ՝ որովհետև վարչութիւնն իր ձեռքն
հասութիւնն վեր նկատելով խնդիրը հոս բե-
րեր է, կառավարիւմ որ կանոնադրութեան
88րդ յօդուածին տրամադրութիւնը ճշգիւ գոր-
ծադրուի . պէտք է որ ամենա ալ խմատա-
սիրենք խնդիրը և հասու կերպով վճիռ տանք,
որպէս զի աղբին կամաց համեմատ վտրուած
ըլլանք . հոս ներկայ գտնուող ժողովուրդը
աղբին ամբողջութիւնը չը կաղմեր, 3 միլիոն
ժողովուրդ ունինք դուրսը . պէտք է որ ժո-
մունակին հանգամանքն ալ նկատողութեան
տաննք և այնպէս վճիռ տանք, որ չվիրա-
ւորէ ոչ տէրութիւնը և ոչ աղղերնիս :

Այսպիսի մահու և կենաց խնդրոյ մը միջ-
